## Արձանագրություն N 2-3

### <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6>> ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.09.2021թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Միրզոյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Դ. Շատվերյան |
| | Աշ. Գրիգորյան |
| | Գ. Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլյան |

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ռ. Եղիազարյան

### 1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

-----------------------------------------------------------------------------------------------------------------

(Ա. Միրզոյան)

Ընդունել ի գիտություն՝

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցներ <<Բիդեք>>, <<ԱՐՍԵՎ>>, <<Ինտերեվրոս-Արգոս>>, <<Գրիգորյան Շին>> և <<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ-ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 09.09.2021թ. ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրանց կողմից, բացառությամբ <<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ-ի:

<<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ-ի կողմից չեն շտկվել՝

***Ծավալաթերթի մասով***

Ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռների ստացված կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

***Հավելված N 1.1-ի մասով***

Շտկումով ներկայացված հավելվածում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

- 1-5, 56-59 տողերով սարքավորումների համար ներկայացված անվանումով արտադրող կամ գոյություն չունի, կամ անվանման մեջ առկա է տառասխալ, որով պայմանավորված դրանց իսկությունը ստուգել հնարավոր չէ:
- 9-13-րդ տողերով ներկայացված է 1-ից ավել մոդելի միևնույն արտադրողի դիմաց և միաժամանակ /միաժամանակ համապատասխանաբար VC-315, ВПА-1 315, 125VO, 160VO, 100VO մոդելները չեն հանդիսանում VKT արտադրության մոդելներ/:
- 10-րդ տողով ներկայացված է 1-ից ավել արտադրող /VKT և BEHTC/:
- 9, 11-13, 17-23, 28-31 տողերով ներկայացված է ներածման սարքավորման մոդել՝ հրավերով պահանջվող օդափոխիչների փոխարեն, որոնք օդափոխության համակարգի տարբեր սարքավորումներ են:
- 9-31-րդ տողերից յուրաքանչյուր և միևնույն ժամանակ բնույթով և/կամ բնութագրով միմյանցից տարբերվող սարքավորումների համար ներկայացված է VKT արտադրողի

միևնույն VKC-S-2 մոդելի ներածման համակարգը, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

- 32 և 33-րդ տողերով պահանջվող համապատասխանաբար ներածման-արտածման ռեկուպերատիվ սարքի և արտածման օդափոխիչի փոխարեն ներկայացվել է օդի լավորակման սպլիտ համակարգեր՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:
- 54-րդ տողով պահանջվող կաթսայի դիմաց ներկայացվել է գազային այրիչ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:
- 70-րդ տողով ներկայացված չէ պահանջվող սարքավորման արտադրողի անվանումը, իսկ որպես մոդել կամ արտադրող ներկայացված STEM-3B անվանումով սարքավորում կամ գոյություն չունի, կամ անվանման մեջ առկա է տառասխալ, որով պայմանավորված վերջինիս իսկությունը ստուգել հնարավոր չէ:
- 78-րդ տողով ներկայացված սարքավորումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերով և նախագծային փաստաթղթերով պահանջված էր 80 անձի համար նախատեսված 12մ$^3$/օր արտադրողականության մաքրման կայան՝ իսկ մասնակցի կողմից ներկայացված TOPAZ "TOPAS-8" մաքրման կայանն ունի 1.2 մ$^3$/օր արտադրողականություն և նախատեսված է 8 անձի համար, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

1.2 Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ մյուս մասնակիցների հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

## 2. Բանակցությունների կազմակերպման և անցկացման մասին

---

(Ա. Միրզոյան)

2.1 Հաշվի առնելով, որ <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6>> ծածկագրով գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը, ծանուցել ոչ գնային պայմանները բավարարող <<Գրիգորյան Շին>>, <<ԱՐՍԵՎ>>, <<Ինտերեվրոս Արգոս>> և <<Բիդեք>> ՍՊ ընկերություններին առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցությունների մասին, որը տեղի կունենա **2021 թվականի սեպտեմբերի 15-ին ժամը 16:00-ին** ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի ընդունարանի խորհրդակցությունների սենյակում):

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

2.2 Բանակցությունների համար ներկա գտնվող մասնակցի կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից

նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը կհայտարարվի ընտրված մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ___________________________ | Ա. Միրզոյան |
| Անդամներ՝ | ___________________________ | Դ. Շատվերյան |
| | ___________________________ | Աշ. Գրիգորյան |
| | ___________________________ | Գ. Գևորգյան |
| Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ | ___________________________ | Ն. Նիկոլյան |